



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԵՎ
ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AGREEMENT
FOR THE PROVISION OF BROKERAGE AND
CUSTODY SERVICES IN FINANCIAL MARKETS

ք. Երևան «___» _____ 202__թ.

done in Yerevan
on this ___ day of _____, 2025

«ԱՐՄԲՐՈԿ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ **Ընկերություն**) ի դեմս Գլխավոր տնօրեն Արամ Կայֆաջյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

ARMBROK Open Joint Stock Company (hereinafter: “**the Company**”) represented by Mr. Aram Kayfajyan, Chief Executive Officer, acting pursuant to the Company’s Charter, on the one part, and _____

(այսուհետ՝ **Հաճախորդ**), մյուս կողմից, (Հաճախորդը և Ընկերությունը միասին հիշատակվելու դեպքում այսուհետ՝ **Կողմեր**, իսկ առանձին անորոշ հիշատակման դեպքում՝ **Կողմ**), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**)՝ հետևյալի մասին.

(hereinafter: “**the Client**”), on the other, (hereinafter collectively called “**the Parties**” and individually referred to in the indefinite form as “**a Party**”), have entered into this agreement (hereinafter: “**the Agreement**”) as follows:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. GENERAL PROVISIONS

1.1. Պայմանագրում օգտագործվող հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ **Օրենք**), դրա հիման վրա Կենտրոնական բանկի կողմից հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 4-07), «Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 33) ինչպես նաև Ընկերության կողմից հաստատված ներքին կանոններով (այսուհետ՝ **Կանոններ**) սահմանված և կիրառվող իմաստը, եթե այլ բան ակնհայտորեն և միանշանակորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից: Պայմանագրի դրույթները մեկնաբանելիս

1.1. Terms used in this Agreement shall have the meanings defined in: the Republic of Armenia Law “On Securities Market” (hereinafter: “**the Law**”); Regulation 4/07 “Requirements for Investment Service Providers” approved by the Central Bank of Armenia (hereinafter: “**Regulation 4/07**”); Regulation 33 “On Securities Custody Activities” (hereinafter: “**Regulation 33**”); and the Company’s internal rules (hereinafter: “**the Rules**”), unless the context of a specific term’s application explicitly and unambiguously requires otherwise. In interpreting this

գերակայությունը տրվում է Կանոններով սահմանված հասկացությունների սահմանմանը:

- 1.2. Կողմերը հաստատում են, որ Հաճախորդի կողմից Ընկերությանն է ներկայացվել հաշվի բացման/տվյալների փոփոխման հայտ, որի հիման վրա կնքվում է սույն պայմանագիրը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ

- 2.1. Պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է մատուցել Պայմանագրի 2.2 կետով սահմանված ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Հաճախորդը պարտավորվում է ընդունել Ընկերության կողմից մատուցված ծառայությունները և վճարել դրանց դիմաց:
- 2.2. Պայմանագրի շրջանակներում Ընկերությունը Հաճախորդին մատուցում է.
 - 2.2.1. Ընկերության «Բրոքերային (դիլերային) գործունեության կանոններ»-ով սահմանված բրոքերային ծառայությունները,
 - 2.2.2. Ընկերության «Պահառության գործունեությունը կարգավորող կանոններ»-ով սահմանված հիմնական պահառուական ծառայությունները:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 3.1. Պայմանագրով Կողմերը ձեռք են բերում և ստանձնում են Ընկերության «Բրոքերային (դիլերային) գործունեության կանոններ»-ով և «Պահառության գործունեությունը կարգավորող կանոններ»-ով սահմանված իրավունքները և պարտականությունները:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

- 4.1. Պայմանագիրը գործում է կնքման պահից սկսած 1 (մեկ) տարի ժամկետով:

Agreement's provisions, definitions under the Rules shall prevail.

- 1.2. The Parties confirm that the Client has submitted to the Company the Account opening/amendment application form, on the basis of which this Agreement is concluded.

2. SUBJECT OF THE AGREEMENT

- 2.1. Under this Agreement, the Company undertakes to provide the services specified in Clause 2.2 hereof (hereinafter: **"the Services"**), and the Client undertakes to accept the Services rendered by the Company and pay for them.
- 2.2. Within the framework of this Agreement, the Company shall provide the Client with:
 - 2.2.1. Brokerage services as defined in the Company's "Rules on Brokerage (Dealing) Activities"; and
 - 2.2.2. Core custody services as defined in the Company's "Rules Regulating Custody Activities".

3. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES

- 3.1. Under this Agreement, the Parties shall acquire and assume the rights and obligations set forth in: the Company's "Rules on Brokerage (Dealing) Activities" and the "Rules Regulating Custody Activities".

4. VALIDITY OF THE AGREEMENT

- 4.1. This Agreement shall enter into force upon execution and remain effective for a period of one (1) year.

4.2. Եթե Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն 10 (տասը) օր առաջ Կողմերից ոչ մեկը գրավոր ձևով չի ծանուցում մյուս Կողմին Պայմանագիրը լուծելու իր մտադրության մասին, ապա Պայմանագիրը յուրաքանչյուր անգամ համարվում է երկարաձգված ևս մեկ տարի ժամկետով:

4.2. Unless either Party notifies the other Party in writing at least 10 (ten) days prior to the expiration of the Agreement term of its intention to terminate the Agreement, the Agreement shall be automatically extended each time for an additional one (1) year term.

5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5. PROCEDURE FOR CALCULATION AND PAYMENT OF FEES FOR SERVICES

5.1. Բրոքերային ծառայությունների դիմաց վարձատրության չափի հաշվարկը և Հաճախորդի կողմից Ընկերությանը վճարումը կատարվում է Ընկերության «Բրոքերային (դիլերային) գործունեության կանոններ»-ով սահմանված կարգով:

5.1. The calculation of brokerage fees and payment thereof by the Client to the Company shall be made in accordance with the procedure established by the Company's "Rules on Brokerage (Dealing) Activities".

5.2. Պահառուական ծառայությունների դիմաց վարձատրության չափի հաշվարկը և Հաճախորդի կողմից Ընկերությանը վճարումը կատարվում է Ընկերության «Պահառության գործունեությունը կարգավորող կանոններ»-ով սահմանված կարգով:

5.2. The calculation of custody service fees and payment thereof by the Client to the Company shall be made in accordance with the procedure established by the Company's "Rules Regulating Custody Activities".

6. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԸ

6. PROCEDURE, TIMING AND FORM OF PROVIDING REPORTS AND OTHER DOCUMENTS TO THE CLIENT

6.1. Հաճախորդին բրոքերային ծառայություններով պայմանավորված հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և ձևը սահմանվում են Ընկերության «Բրոքերային (դիլերային) գործունեության կանոններ»-ով:

6.1. The procedure, timing and form of providing reports and other documents related to brokerage services to the Client shall be determined by the Company's "Rules on Brokerage (Dealing) Activities".

6.2. Հաճախորդին պահառուական ծառայություններով պայմանավորված հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և ձևը սահմանվում են Ընկերության «Պահառության գործունեությունը կարգավորող կանոններ»-ով:

6.2. The procedure, timing and form of providing reports and other documents related to custody services to the Client shall be determined by the Company's "Rules Regulating Custody Activities".

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերի նկատմամբ կիրառվում են Ընկերության «Բրոքերային (դիլերային) գործունեության կանոններ»-ով կամ «Պահառության գործունեությունը կարգավորող կանոններ»-ով սահմանված պատասխանատվության միջոցները:

8. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Կողմերի միջև կապն իրականացվում է Կանոններով սահմանված կարգերով:
 8.2. Հաճախորդի հետ կապն իրականացվում է իր կողմից ներկայացված հաշվի բացման/տվյալների փոփոխման հայտում նշված կապի միջոցներով, որոնք համարվում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ:
 8.3. Ընկերության հետ կապն իրականացվում է Ընկերության պաշտոնական կայքում նշված կամ Ընկերության կողմից Հաճախորդին ներկայացված կապի միջոցներով, որոնք համարվում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ:
 8.4. Պայմանագրի 8.2 և 8.3 կետերում նշված տվյալների փոփոխության դեպքում Կողմը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղյակ պահել մյուս Կողմին և կրում է, մինչև նման տեղեկացումը նախկին կապի միջոցով կատարված ծանուցումները չստանալու, բոլոր բացասական հետևանքները:

7. LIABILITY OF THE PARTIES

7.1. For failure to perform or duly perform their obligations under this Agreement, the Parties shall be subject to the liability measures set forth in the Company's "Rules on Brokerage (Dealing) Activities" or the "Rules Regulating Custody Activities."

8. COMMUNICATION PROCEDURE BETWEEN THE PARTIES

8.1. Communications between the Parties shall be conducted in accordance with the procedures established by the Rules.
 8.2. Communications with the Client shall be made through the contact methods specified in the Client's Account opening/amendment application form, which are deemed reliable means of information exchange.
 8.3. Communications with the Company shall be made through the contact methods published on the Company's official website or provided by the Company to the Client, which are deemed reliable means of information exchange.
 8.4. In case of changes to the contact details specified in Clauses 8.2 and 8.3 hereof, the Party must immediately notify the other Party accordingly and shall bear all negative consequences arising from the non-receipt of communications sent to the previous contacts prior to such notification.

**9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ
ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ
ԿԱՐԳԸ**

- 9.1. Պայմանագրի դադարեցման դեպքում բրոքերային ծառայությունների շրջանակներում Ընկերության տիրապետմանը հանձնված Հաճախորդի դրամական միջոցները վերադարձվում են Հաճախորդին Ընկերության «Բրոքերային (դիլերային) գործունեության կանոններ»-ով սահմանված կարգով:
- 9.2. Պայմանագրի դադարեցման դեպքում Հաճախորդի արժեթղթերի հաշիվներում հաշվառվող արժեթղթերը վերադարձվում են Հաճախորդին Ընկերության «Պահառության գործունեությունը կարգավորող կանոններ»-ով սահմանված կարգով:

**9. PROCEDURE FOR RETURN OF CLIENT
ASSETS UPON TERMINATION OF THE
AGREEMENT**

- 9.1. Upon termination of the Agreement, any Client funds held by the Company under brokerage services shall be returned to the Client in accordance with the procedure established by the Company's "Rules on Brokerage (Dealing) Activities".
- 9.2. Upon termination of the Agreement, any securities registered in the Client's securities accounts shall be returned to the Client in accordance with the procedure established by the Company's "Rules Regulating Custody Activities".

**10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌԵԼԻ
ԻՐԱՎՈՒՆՔԸ**

- 10.1. Պայմանագրից բխող կամ դրա հետ կապված բոլոր վեճերը ենթակա են լուծման կողմերի միջև բանակցությունների միջոցով:
- 10.2. Պայմանագրի 10.1 կետում նշված բանակցությունները սկսելու պահից տասնօրյա ժամկետում վեճը չլուծվելու դեպքում այն ենթակա է լուծման դատարանում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 10.3. Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: Պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրության կիրառելի նորմերին համապատասխան:

**10. DISPUTE RESOLUTION AND APPLICABLE
LAW**

- 10.1. All disputes arising out of or in connection with this Agreement shall be resolved through negotiations between the Parties.
- 10.2. If the dispute is not resolved within ten (10) days from the commencement of negotiations under Clause 10.1, it shall be submitted to the courts pursuant to the procedure established by the legislation of the Republic of Armenia.
- 10.3. This Agreement shall be governed by and construed in accordance with the laws of the Republic of Armenia. All matters not regulated by this Agreement shall be resolved in accordance with the applicable laws of the Republic of Armenia.

**11. ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԵՎ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 11.1. Պայմանագրի ստորագրմամբ Հաճախորդը հավաստիացնում է, որ.
- 11.1.1. Իր գրանցման (քաղաքացիության) երկրի օրենսդրությանը համապատասխան պատշաճ գործունակ անձ է և իրավասու է կնքել Պայմանագիր:
 - 11.1.2. Պայմանագիրը ստորագրած անձինք (իրավաբանական անձի դեպքում) իրավունք ունեն ստորագրել այն Հաճախորդի անունից՝ համաձայն գործող օրենսդրության և Հաճախորդի ներքին իրավական ակտերի, և նման ստորագրությամբ ընդունում են իրավաբանորեն պարտադիր պարտավորություններ:
 - 11.1.3. Պայմանագրի համաձայն Ընկերության տիրապետմանը հանձնված Հաճախորդի միջոցները (արժեթղթեր և դրամական միջոցներ) ստացվել են օրինական աղբյուրներից:
 - 11.1.4. Չի իրականացնում միջազգային տնտեսական պատժամիջոցներով արգելված տնտեսական գործունեություն:
 - 11.1.5. Ընկերությունն իրեն հնարավորություն է ընձեռել ծանոթանալու Հայաստանում ներդրումային և պահառության ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտերին:
 - 11.1.6. Ընկերությունն իրեն տրամադրել է կանոնակարգ 4-07-ով սահմանված բոլոր տեղեկությունները:
 - 11.1.7. Պատշաճ կերպով կարդացել է Պայմանագիրը, Կանոնները, Ընկերության սակագները, Ընկերության՝ պատվերների կատարման քաղաքականությունը ինչպես նաև Հաճախորդի և Ընկերության հարաբերություններին առնչվող հայտարարությունները, ծանուցումները,

11. REPRESENTATIONS AND WARRANTIES

- 11.1. By signing this Agreement, the Client represents and warrants that:
- 11.1.1. They are a duly capable person/entity and authorized to enter into this Agreement in accordance with the laws of their country of registration (citizenship).
 - 11.1.2. The signatory(ies) (in case of a legal entity) have authority to sign on behalf of the Client under applicable laws and the Client's internal regulations, and such signature creates legally binding obligations.
 - 11.1.3. All assets (securities and funds) transferred to accounts with the Company under this Agreement originate from legitimate sources.
 - 11.1.4. The Client does not engage in economic activities prohibited by international economic sanctions.
 - 11.1.5. The Company has given the Client the opportunity to review the legal acts regulating investment and custody services in Armenia.
 - 11.1.6. The Company has provided the Client with all information required under Regulation 4/07.
 - 11.1.7. The Client has duly read and understood: this Agreement, the Rules, the Company's tariff of charges, order execution policy, and all related disclosures, notices, warnings and other documents posted on the Company's official website; has no questions or suggestions regarding their

նախագգուշացումները և այլ փաստաթղթերը որոնք տեղադրված են Ընկերության պաշտոնական կայքում, դրանց հետ կապված հարցեր կամ առաջարկություններ չունի, դրանց բովանդակության վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումների/բացատրման կարիք չունի և լիովին հասկանում և ընդունում է դրանք, ինչպես նաև համաձայն է, որ դրանք կիրառվեն իր նկատմամբ:

- 11.2. Պայմանագրի ստորագրմամբ Ընկերությունը հավաստիացնում է, որ.
- 11.2.1. պատշաճ գործունակ անձ է և իրավասու է Հաճախորդի հետ պայմանագիր կնքել,
 - 11.2.2. ունի բոլոր լիցենզիաները և թույլտվությունները, որոնք անհրաժեշտ են Ծառայությունները մատուցելու համար,
 - 11.2.3. Ընկերության անունից Պայմանագիրը ստորագրող անձինք իրավունք ունեն ստորագրել այն և դրանով իսկ ստեղծել, փոփոխել և դադարեցնել Պայմանագրից բխող իրավունքներն ու պարտականությունները Ընկերության համար,
 - 11.2.4. չի կնքել ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու համաձայնագիր:
- 11.3. Պայմանագրի ստորագրմամբ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Ընկերության կողմից իրականացվի Հաճախորդի, Հաճախորդի լիազորված ներկայացուցիչների և իրական շահառուների անձնական տվյալների՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված մշակում: Հաճախորդը նաև հավաստում է, որ ունի իր լիազորված ներկայացուցիչներին և իրական շահառուներին վերաբերող անձնական տվյալների մասով սույն կետով սահմանված համաձայնությունը տալու համար պահանջվող բոլոր լիազորություններն ու համաձայնությունները:

content; requires no further clarifications/explanations; fully accepts them and agrees that they shall be applied to the Client.

- 11.2. By signing this Agreement, the Company represents and warrants that:
- 11.2.1. It is a duly capable entity authorized to enter into agreements with Clients.
 - 11.2.2. It holds all necessary licenses and permits to provide the Services.
 - 11.2.3. The signatories have authority to execute this Agreement on the Company's behalf, creating, modifying and terminating its rights and obligations hereunder.
 - 11.2.4. It has not entered into any agreement waiving the right to challenge decisions of the financial system mediator.
- 11.3. By signing this Agreement, the Client consents to the Company's processing of personal data of the Client, authorized representatives and beneficial owners as defined by Republic of Armenia Law "On Protection of Personal Data", and confirms having all necessary authorizations to provide such consent for the said authorized representatives and beneficial owners.
- 11.4. By signing this Agreement, the Client consents to disclosure of their personal and account information to: custodians, banks, auditors, accountants, consultants, representatives, or other individuals and/or corporate service providers engaged by the Company, on the conditions that such disclosure is necessary for the provision of the said

- 11.4. Պայմանագրի ստորագրմամբ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Ընկերության կողմից իր և իր հաշիվների վերաբերյալ տեղեկություններ տրամադրվեն Ընկերությանը արժեթղթերի պահառության, բանկային, աուդիտորական, հաշվապահական, այլ խորհրդատվական կամ ներկայացուցչական ծառայություններ մատուցող կամ Ընկերության համար որոշակի աշխատանքներ կատարող անձանց և կազմակերպություններին, եթե դա անհրաժեշտ է այդ ծառայությունները մատուցելու կամ աշխատանքները կատարելու համար, և եթե այդ անձինք և կազմակերպությունները գրավոր պարտավորություն են տվել պահպանել տեղեկությունը և ձեռնպահ մնալ այն հրապարակելուց:
- 11.5. Պայմանագրի ստորագրմամբ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի ՀՀ հարկային օրենսգրքի գլուխ 80.2-ով սահմանված դեպքերում և կարգով իր և իր հաշիվների վերաբերյալ Ընկերության կողմից տեղեկություններ տրամադրվեն ՀՀ հարկային մարմնին:
- 11.6. Պայմանագրի ստորագրմամբ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Ամերիկայի Միացյալ Նահանգների օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտով սահմանված դեպքերում և կարգով իր և իր հաշիվների վերաբերյալ Ընկերության կողմից տեղեկություններ տրամադրվեն ԱՄՆ ներքին եկամուտների ծառայությանը:
- 11.7. Պայմանագրի ստորագրմամբ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Ընկերությունը Հաճախորդին մատուցվող ծառայությունների շրջանակներում Ընկերության տիրապետմանը հանձնված Հաճախորդի դրամական միջոցները և/կամ

services to the Company and that the recipients have undertaken in writing to maintain confidentiality and refrain from publishing such information.

- 11.5. By signing this Agreement, the Client consents to disclosure of their personal and account information to the Republic of Armenia tax authorities under Chapter 80.2 of the Republic of Armenia Tax Code.
- 11.6. By signing this Agreement, the Client consents to disclosure of their personal and account information to the US Internal Revenue Service under Foreign Account Tax Compliance Act (FATCA) requirements.
- 11.7. By signing this Agreement, the Client consents that, as part of the Services, the Company may at its discretion hold the Client's funds and/or securities deposited in the Company's accounts with any bank or custodian, including those operating outside the Republic of Armenia.

արժեթղթերը Ընկերության հայեցողությամբ պահպանի ցանկացած բանկում կամ պահառուի մոտ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող:

12. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 12.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կանոններով սահմանված կարգով կնքված համարվելու պահից:
- 12.2. Պայմանագրի փոփոխություններն ու լրացումները կատարվում են կողմերի միջև լրացուցիչ համաձայնագիր կազմելու միջոցով, որը դառնում է Պայմանագրի անբաժանելի մասը:
- 12.3. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրն՝ այդ մասին մյուս կողմին առնվազն 10 (տասը) օրացուցային օր առաջ ծանուցելու պայմանով:
- 12.4. Ընկերության «Բրոքերային (դիլերային) գործունեության կանոններ»-ը և «Պահառության գործունեությունը կարգավորող կանոններ»-ը սույն պայմանագրի անբաժանելի մասն են:
- 12.5. Ընկերության տիրապետմանը հանձնված Հաճախորդի դրամական միջոցների նկատմամբ տոկոսային եկամուտ Ընկերության կողմից Հաճախորդին չի վճարվում, եթե այլ բան սահմանված չէ Կողմերի համաձայնությամբ:
- 12.6. Պայմանագիրը կազմված է հայերենով և անգլերենով, հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին 1 (մեկ) օրինակ: Հայերեն և անգլերեն տարբերակների միջև տարընթերցումների դեպքում գերակայությունը տրվում է հայերեն տարբերակին:

12. FINAL PROVISIONS

- 12.1. This Agreement shall enter into effect upon execution in accordance with the procedure established by the Rules.
- 12.2. Any amendments or addenda to this Agreement shall be made by executing an additional written agreement between the Parties, which shall become an integral part hereof.
- 12.3. Either Party may unilaterally terminate this Agreement by providing at least 10 (ten) calendar days' prior written notice to the other Party.
- 12.4. The Company's "Rules on Brokerage (Dealing) Activities" and "Rules Regulating Custody Activities" shall form an integral part of this Agreement.
- 12.5. No interest shall be paid by the Company on Client funds maintained in accounts with the Company, unless otherwise agreed in writing between the Parties.
- 12.6. This Agreement is made in Armenian and English, in 2 (two) equally authentic copies—one for each Party. In case of discrepancies between the versions, the Armenian text shall prevail.

**13. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ՀԱՃԱԽՈՐԴ**

Անուն / Անվանում՝	
Անձը հաստատող փաստաթուղթ / Պետական գրացնման համար՝	
Լիազորված անձ (առկայության դեպքում)՝	
Լիազորության հիմքը	

**13. DETAILS OF THE PARTIES
THE CLIENT**

Name / Full name:	
Personal ID / State registration number:	
Authorized representative (if any):	
The basis of authority	

Ստորագրություն /Signature

Կ.Տ./Seal

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Անվանում՝	«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ
Պետական գրացնման համար՝	#10
Լիցենզիա՝	0010, տրված 04.11.2008, ՀՀ ԿԲ կողմից
Լիազորված անձ՝	Արամ Կայֆաջյան
Լիազորության հիմքը	Կանոնադրություն

THE COMPANY

Name:	ARMBROK OJSC
State registration number:	10
License:	0010, issued on 4/11/2008 by the CBA
Authorized signatory:	Aram Kayfajyan
The basis of authority	Charter

Ստորագրություն/Signature

Կ.Տ./Seal